ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

МАТЕРИАЛЫ ЕЖЕГОДНОЙ НАУЧНОЙ СЕССИИ 2015 ГОДА

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

PROCEEDINGS OF THE ANNUAL SCIENTIFIC SESSION OF 2015

1.6 (16)

Общественные науки (Социология, экономика, философия, психология, журналистика)

Social Sciences (Sociology, Economics, Philosophy, Psychology, Journalism)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2016

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829-4367

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2015 Թ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ

1.6 (16)

Հասարակական գիտություններ
(Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, փիլիսոփայություն, հոգեբանություն, ժուռնալիստիկա)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издается по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

տ.գ.դ., պրոֆ. Վ. Բոստանջյան
տ.գ.դ., պրոֆ. Մ. Միքայելյան
տ.գ.դ., պրոֆ. Ս. Ղանթարջյան
տ.գ.դ., պրոֆ. Թ. Թորոսյան
տեխ.գ.դ., պրոֆ. Ա. Առաքելյան
տ.գ.դ., դոց. Հ. Մնացականյան
ս.գ.թ., դոց. Հ. Վերմիշյան
փ.գ.թ., դոց. Ա. Սարգսյան
հ.գ.թ., դոց. Ն. Խաչատրյան
հ.գ.թ., դոց. Հ. Հովհաննիսյան
ս.գ.թ. Ա. Բաբլոյան
ս.գ.թ. Յու. Մելքումյան
բ.գ.թ. Մ. Կարապետյան

Редакционная коллегия:

д.э.н., проф. В. Бостанджян
д.э.н., проф. М. Микаэлян
д.э.н., проф. С. Кантарджян
д.э.н., проф. Т. Торосян
д.т.н., проф. А. Аракелян
д.э.н., доц. А. Мнацаканян
к.с.н., доц. А. Вермишян
к.ф.н., доц. А. Саргсян
к.п.н., доц. Н. Хачатрян
к.п.н., доц. Г. Ованисян
к.с.н. А. Баблоян
к.с.н. Ю. Мелкумян
к.ф.н. М. Карапетян

Editorial Board

DSc, Prof. V. Bostanjyan
DSc, Prof. M. Mikaelyan
DSc, Prof. S. Ghantarjyan
DSc, Prof. T. Torosyan
DSc, Prof. A. Arakelyan
DSc, Associate Prof. H. Mnatsakanyan
PhD, Associate Prof. H. Vermishyan
PhD, Associate Prof. A. Sargsyan
PhD, Associate Prof. N. Khachatryan
PhD, Associate Prof. H. Hovhannisyan
PhD A. Babloyan
PhD Y. Melkumyan
PhD M. Karapetyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71 01 94,
Էլ. փոստ՝ sss@ysu.am
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ www.ssspub.ysu.am.

Ժողովածուն հրատարակվում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Մարտին Թովմասյան
ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոն, դասախոս
Էլ. փոստ՝ martin.tovmasyan@ysu.am

ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1991-2008 ԹԹ.

Համաշխարհային տնտեսության զարգացման արդի շրջանում յուրաքանչյուր պետության համար առանցքային կարևորություն է ձեռք բերում կայուն միջազգային տնտեսական հարաբերությունների հաստատումը: Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև տնտեսական համագործակցության մակարդակի վերլուծության համար պետք է հիմնվել միջազգային առևտրի, աշխատուժի հոսքերի, կապիտալի արտահանման և միջազգային վարկի, միջազգային արժութային հարաբերությունների, միջազգային գիտատեխնիկական և արտադրական համագործակցության վերլուծության վրա:

ԳԴՀ տնտեսությունը հետարդյունաբերական տնտեսություն է, որը հիմնվում է սոցիալ-շուկայական տնտեսության սկզբունքի վրա և որի առաջատար ճյուղերից է արդյունաբերությունը: Տնտեսական ներուժով Գերմանիան առաջատար է Եվրոպայում՝ մեծ յոթնյակում զբաղեցնելով երրորդ տեղը ԱՄՆ-ից և Ճապոնիայից հետո: 20-րդ դարի վերջին Գերմանիան, որպես Եվրոպայի ամենաազդեցիկ պետություն, ձեռք է բերում հատուկ կարգավիճակ՝ որպես տարածաշրջանի տնտեսական շարժիչ և Եվրամիության նոր ձևավորվող առաջատար[1]:

Ավանդաբար Գերմանիայի տնտեսության առաջատար ճյուղերից է եղել արդյունաբերությունը, որն արտաքին առևտրի հիմնական շարժիչն է: Աշխարհում բարձր դիրքեր են գրավում գերմանական տեղեկատվական և բիոտեխնոլոգիաները, էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործման հետ կապված և էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաները: Արտահանվող հիմնական արտադրանքներն են՝ մեքենասարքավորումները, տրանսպորտային միջոցները, քիմիական արտադրանքը, մետաղները և տեքստիլը:

ՀՀ տնտեսությունը, թեև դեռ գտնվում է շուկայական տնտեսության կառուցման ճանապարհին, սակայն դասվում է ԱՊՀ այն քիչ երկրների շարքին, որոնց հաջողվեց 2000-2008 թթ. կրկնապատկել համախառն ներքին արդյունքի ցուցանիշը՝ տնտեսական շրջափակման և տրանսպորտային սահմանափակումների պայմաններում: Արդյունքում ձևավորվեց յուրօրինակ տնտեսական զարգացման մոդել, որը ապահովեց տնտեսական զարգացման բավականին բարձր տեմպեր և մակրոտնտեսական կայունություն, ընդհուպ մինչև 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության դրսևորվելը:



Գծ. 1. Հայաստանի և Գերմանիայի տնտեսությունների կառուցվածքի համեմատություն (2008 թ. տվյալներով)[2]

[1] **Бжезинский З.,** Великая шахматная доска, Москва, 1999, с. 56.
[2] Աղբյուրը՝ World Development Indicators 2010, pp. 230-232:

Այսպիսով, ՀՀ և ԳԴՀ տնտեսությունները, թեև գտնվում են տնտեսական զարգացման տարբեր փուլերում և անհամեմատելի են տնտեսական կարողությունների տեսանկյունից, սակայն ՀՀ անկախացման հենց սկզբնական շրջանից Գերմանիան դրսևորել է շուկայական տնտեսության կառուցման և տնտեսական բարդ վերափոխումների ճանապարհին Հայաստանին օժանդակելու և տնտեսական կապեր հաստատելու պատրաստակամություն:

1990 թ. վերամիավորումից հետո Գերմանիան քաղաքական նպատակներին զուգահեռ ձգտում էր իր տնտեսական ազդեցությունն ամրապնդել նախկին Խորհրդային Միության մաս կազմող նորանկախ Անդրկովկասյան հանրապետություններում:

Միաժամանակ, ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանը հենվում էր արևմտյան երկրների, այդ թվում՝ Գերմանիայի օժանդակության վրա: Սակայն, կոմունիկացիոն շրջափակման մեջ գտնվող և բնական ռեսուրսներով ոչ հարուստ Հայաստանը անկախության առաջին տարիներին Գերմանիայի կողմից չէր դիտվում որպես պոտենցիալ շահավետ գործընկեր: Մյուս կողմից, մշտապես առկա էր նաև Ռուսաստանի գործոնը: Ինչպես նշում է Կ. Հաջիևը, «ցանկացած տերության տնտեսական ներթափանցումը Կովկաս ինքնին դիտվում է ռուսական շահերի նեղացում այս տարածաշրջանում»[1]:

1990-ական թթ. առաջին կեսին ՀՀ հետ ԳԴՀ տնտեսական համագործակցության հիմնական ասպեկտը զինված հակամարտության հետևանքների վերացմանը, մրցունակ շուկայական տնտեսության և պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորմանը, աղքատության և դրա սոցիալական հետևանքների դեմ պայքարին ուղղված ֆինանսական ու տեխնիկական օժանդակությունն էր[2]: Գերմանիայի կողմից սոցիալական ոլորտի կարգավորմանն ուղղված աջակցության ծրագրերի շեշտադրումը պատահական չէր, քանի որ նշված շրջանում տնտեսական զարգացման գերմանական մոդելը բնորոշվում էր որպես սոցիալ-շուկայական տնտեսություն, ինչը իրենից ներկայացնում է փոխզիջում տնտեսական աճի և հարստության հնարավորինս հավասարաչափ բաշխման միջև[3]:

Գերմանիայի կողմից Հայաստանին տրամադրվող տեխնիկական օժանդակության ծրագրերի հիմքը դրվեց 1993 թ., իսկ ֆինանսական օժանդակության ծրագրերն իրականացվում են սկսած 1995 թ. մայիսի 5-ին, երբ ստորագրվեց ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարության միջև ֆինանսական համագործակցության մասին առաջին համաձայնագիրը: Տեխնիկական համագործակցության շրջանակներում ծրագրերն իրականացվում են Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության (ԳՏՀԸ՝ GTZ, այժմ՝ ԳՄՀԸ՝ GIZ)՝[4] կողմից: Ֆինանսական համագործակցության ծրագրերի ֆինանսավորումն իրականացնում է KfW զարգացման բանկը՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) կողմից տրամադրված ֆինանսական միջոցներով և հանձնարարությամբ[5]: Իրականացված ծրագրերից հարկ է նշել «Փախստականներին օգնության», «Էներգետիկայի անհապաղ օգնության», «Հոսանքահաղորդիչ համակարգի վերականգնման», «Արմավիրի մարզում կոմունալ ենթակառուցվածքների վերականգնման» և այլ ծրագրեր[6]:

Կարող ենք ասել, որ 1990-ական թթ. հայ-գերմանական տնտեսական կապերը, չնայած մի շարք միջպետական համաձայնագրերի[7] առկայությանը, սահմանափակվում էին գլխավորապես Գերմա-

---

[1] Տե՛ս **Гаджиев К.,** Геополитика Кавказа, Москва, 2003, с. 295.

[2] Տե՛ս Die GTZ in Georgien, Aserbaidschan, Armenien // GTZ , հասանելի է՝ www.gtz.de/de/weltweit/574.htm, մատչելի էր՝ 01.05.2009.

[3] Տե՛ս **Погорлецкий А.,** Экономика зарубежных стран, Второе издание, Санкт Петербург, 2001, с. 211.

[4] ԳՏՀԸ աշխարհի տարբեր երկրներում գործող միջազգային համագործակցության դաշնային հաստատություն է, որի նպատակն է՝ նպաստել Հարավի և Արևելքի երկրների քաղաքական, տնտեսական զարգացմանը, բնապահպանական և սոցիալական խնդիրների լուծմանը՝ բարելավելով մարդկանց կենսապայմանները:

[5] Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ միջազգային ֆինանսական և տեխնիկական համագործակցության մասին զեկույցի, հասանելի է՝ www.mfe.am/up/ifc/arm-german-ref2008.pdf.

[6] Մանրամասն տե՛ս «Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի այցը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն», Հավելված 2. Տեղեկանք Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի դաշնային հանրապետության միջև զարգացմանը նպաստող համագործակցության մասին, ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, ԱԳՆ Եվրոպայի վարչություն, Երևան, 17 դեկտեմբերի, 2002 թ., էջ 52-58:

[7] Տե՛ս ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարության միջև ֆինանսական համագործակցության մասին համաձայնագիրը՝ 05 մայիսի, 1995 թ., ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարության միջև ուսումնասիրությունների և մասնագետների հիմնադրամ ստեղծելու վերաբերյալ համաձայնագիրը՝ 25 մայիսի, 1995 թ., ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարության միջև կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագիրը՝ 21 դեկտեմբերի, 1995 թ., ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարության միջև սննդամթերքի ապահովման բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրը՝ 21 մայիսի, 1997 թ., ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարության միջև էներգետիկայի բնագավառում անհապաղ օգնության միջոցառումներ նախագծի շրջանակում ֆինանսական համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը՝ 25 հուլիսի, 1997 թ., ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարության միջև ֆինանսական համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը (էներգետիկայի բնագավառում անհապաղ օգնության միջոցառումներ (Քանաքեռի հիդրոէլեկտրակայան) նախագիծ)՝ 25 հուլիսի, 1997 թ., ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարության միջև տեխնիկական համագործակցության մասին համաձայնագիրը. 27 հուլիսի, 1998 թ., ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարության միջև 1997 թ. ֆինանսական համագործակցության մասին համաձայնագիրը՝ 27 հուլիսի, 1998 թ. ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարության միջև 1999-2000 թթ. ֆինանսական համագործակցության մասին համաձայնագիրը.13 սեպտեմբերի, 1999 թ.:

նիայի կողմից ՀՀ-ին տրամադրվող տեխնիկական և ֆինանսական օժանդակությամբ, իսկ երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալները դեռևս դրսևորում էին ցածր ցուցանիշներ:

1998 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ՀՀ պետռեգիստրում գրանցված ընդհանուր թվով 1299 օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություններց միայն 24-ն էին գերմանական մասնակցությամբ, որոնցից 16-ը հայ-գերմանական համատեղ ձեռնարկություններ էին. դրանց մեծ մասում գերմանական մասնաբաժինը չէր հասնում 1 տոկոսի: Գերմանիայի հետ համատեղ ձեռնարկությունների, Հայաստանում գերմանական ընկերությունների ներկայության և ակտիվության մակարդակով ՀՀ-ն մի քանի անգամ զիջում էր Վրաստանին ու Ադրբեջանին[1]:

Դա պայմանավորված էր Հայաստանում կապիտալ ներդրումների հետ կապված՝ գերմանական ներդրողների որոշ վերապահումներով, որոնց պատճառը, թերևս, ՀՀ-ում ներքաղաքական վիճակն էր, ներդրումային իմիջի ու ներդրումների պաշտպանվածության երաշխիքների ոչ բավարար մակարդակը:

Երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների ակտիվացման միտումներ սկսեցին դրսևորվել 2000 թ-ից: Մասնավորապես՝ 2000 թ. մայիսին Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի պատվիրակության տարածաշրջանային այցը, Բունդեսթագի նախագահ Ա. Ֆուքսի գլխավորած պատվիրակության կատարած այցը, հուլիսին և դեկտեմբերին Բունդեսթագի տնտեսական համագործակցության և զարգացման հանձնաժողովի պատվիրակության և Բունդեսթագի բյուջետային հարցերի հանձնաժողովի նախագահ Հանս Գեորգ Վագների գլխավորած պատվիրակության այցերը[2] առաջանցիկ քայլ էին տնտեսական համագործակցության խորացման գործում:

Հարկ է առանձնացնել 2000 թ. մայիսի 11-ին Բեռլինում հաջողությամբ անցկացված՝ Հայաստանի տնտեսությանը նվիրված գործարար համաժողովը, որը Հայաստանի տնտեսական և ներդրումային միջավայրի պարզեցման և գերմանական ներդրումների ներգրավման ուղղությամբ առաջին մեծածավալ միջոցառումը կարելի է համարել: Հատկանշական է նաև 2000 թ. հունիսի 1-ից հոկտեմբերի 31-ը Գերմանիայի Հաննովեր քաղաքում «EXPO 2000» միջազգային ցուցահանդեսի անցկացումը, որտեղ Հայաստանը ներկայացվեց առանձին տաղավարով:

2001 թ. մայիսի 9-ից 11-ը Բոննում կայացան 2001-2002 թթ. զարգացման բնագավառում հայ-գերմանական համագործակցության հարցերի վերաբերյալ միջկառավարական հերթական բանակցությունները: Բանակցությունների արդյունքում որոշվեց 2001-2002 թթ. համագործակցության համար Հայաստանին հատկացնել ընդհանուր առմամբ 49 մլն գերմանական մարկի ֆինանսական ու տեխնիկական օժանդակություն, որից 5 մլն-ը՝ որպես դրամաշնորհ, իսկ մնացածը որպես արտոնյալ վարկեր[a] Զարգացման միջազգային ասոցիացիայի պայմաններով[3]:

Ուսումնասիրելով երկու երկրների միջև առևտրաշրջանառության դինամիկան 1998-2008 թթ.՝ արձանագրում ենք հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1. ՀՀ և ԳԴՀ միջև առևտրաշրջանառության ցուցանիշները[4]

	ՀՀ արտահանումը ԳԴՀ (հզ ԱՄՆ դոլար)	**ԳԴՀ տեղը ՀՀ արտահանման մեջ**	**ՀՀ ներմուծումը ԳԴՀ-ից (հզ ԱՄՆ դոլար)**	**ԳԴՀ տեղը ՀՀ ներմուծման մեջ**
1998	9303.1	7	34037	9
1999	10201	6	34244	6
2000	12918	6	36487	9
2001	11122	9	33962	7
2002	28164	7	42261	9
2003	44419	5	43762	9
2004	83180	3	73910	7
2005	152108	1	141356	3
2006	148028	1	145335	4
2007	169677	2	221145	4
2008	183711	2	255222	5

Ուսումնասիրելով ՀՀ արտահանման մեջ ԳԴՀ տեսակարար կշռի դինամիկան՝ ՀՀ արտահանումը Գերմանիա սկսել է աճել 2002 թ. սկսած, իսկ արդեն 2004 թ. գրանցվել է բավականին բարձր աճ՝ 6.5 տոկոսից հասնելով 11.5 տոկոսի:

---

[1] Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, գ. 16, ց.6, թ 5:

[2] Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, գ. 19, ց.7, թթ. 24-28:

[3] «Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի այցը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն», էջ 40-41:

[4] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության՝ Հայաստանի ամենամյա վիճակագրական տարեգրքերում հրապարակվող արտաքին տնտեսական գործունեության մասին տվյալների հիման վրա. 1998-2000 թթ. տվյալներն՝ ըստ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001»-ի (էջ 451-458), 2001-2004 թթ. տվյալներն՝ ըստ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» 2005-ի (էջ 487-493), 2005-2008 թթ. տվյալները՝ ըստ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» 2009-ի (էջ 457-463):

Դիտարկելով Գերմանիայի տեսակարար կշռի դինամիկան ՀՀ ներմուծման մեջ՝ գերմանական արտադրանքի նկատմամբ հայկական շուկայում պահանջարկի հարաբերական աճ է գրանցվել ևս սկսած 2004 թ., իսկ արդեն 2005 թ. ցուցանիշը կազմել է 7.8 %՝ ամենաբարձրը դիտարկվող ժամանակահատվածի համար: 2002 թ. դիտվող արտահանման տեսակարար կշռի շարունակական աճը, որն առավել նկատելի է՝ սկսած 2004 թ., պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ գործոններով, այդ թվում՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի՝ 2003 թ. հունվարի 14-15-ը ԳԴՀ կատարած աշխատանքային այցի շրջանակներում տնտեսական համագործակցության բնագավառում ձեռք բերված մի շարք պայմանավորվածություններով (մասնավոր բիզնեսի ոլորտում ինտենսիվ համագործակցության, հայ-գերմանական խոշոր գործարար-համաժողովի իրականացման և այլնի վերաբերյալ):

Հայ-գերմանական տնտեսական կապերի հետագա ընդլայնման գործում մեծ նշանակություն ունեցավ նաև Ռ. Քոչարյանի 2004 թ. նոյեմբերի 17-19-ը ԳԴՀ կատարած երկրորդ պաշտոնական այցը, որի շրջանակներում ԳԴՀ կանցլեր Գ. Շրյոդերը գոհունակությամբ նշեց, որ Գերմանիայի և Հայաստանի միջև ապրանքաշրջանառությունն աճել է 40%-ով[1]:

ՀՀ տնտեսությունում գերմանական ներդրումների ծավալների դինամիկայի ուսումնասիրությունը (տե՛ս գծապատկեր 2.4) վկայում է, որ 2004 թ-ից ՀՀ և ԳԴՀ միջև ապրանքաշրջանառության ակտիվացմանը զուգընթաց, դիտվել է նաև գերմանական կապիտալի զգալի ներհոսք դեպի ՀՀ տնտեսություն:



Գծ. 2. Գերմանական ներդրումները ՀՀ տնտեսությունում (1998-2008 թթ.)[2].

Ընդհանուր առմամբ, 1998-2006 թթ. Հայաստանում ԳԴՀ կողմից իրականացվել է 186.672,8 հզ ԱՄՆ դոլարի ներդրում, ինչը կազմում է տվյալ ժամանակահատվածում իրականացված ընդամենը ներդրումների 7.65, ուղղակի ներդրումների՝ 10.91%-ը[3]: Նշենք, որ 2005 թ. համեմատությամբ 2006 թ. ներդրումների կրճատումը դեռևս չի խոսում երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների մակարդակի անկման մասին. պարզապես 2005 թ. ՀՀ տնտեսությունում գերմանական ներդրումների մեծ ցուցանիշը պայմանավորված էր հանքարդյունաբերության ոլորտում խոշոր ներդրումային նախագծի մեկնարկի հետ: Հարկ է նշել, որ 2006 և 2007 թթ. գերմանական կապիտալով իրականացված համապատասխանաբար 47815.9 հազ. և 55251.9 հազ. դոլարի[4] ներդրումներն ուղղվել են միայն հանքարդյունաբերությանը, ինչը ակներև վկայում է գերմանական ներդրումների դիվերսիֆիկացման անհրաժեշտության մասին:

2008 թ. բեկումային էր ոչ միայն ԳԴՀ-ի, այլև համաշխարհային տնտեսության համար՝ պայմանավորված նախադեպը չունեցող համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ: 2008 թ. Գերմանիայի տնտեսության համախառն ներքին արդյունքի տարեկան աճը կազմեց 2%, սակայն այդ ցուցանիշը նվազման միտումներ դրսևորեց՝ սկսած 2008 թ. երրորդ քառորդից, իսկ արդեն 2009 թ. գրանցվեց մոտ 2.25% տնտեսական անկում, ինչը բացատրվում է առաջին հերթին գերմանական արտահանման զգալի կրճատմամբ: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը հանգեցրեց գերմանական ընկերությունների արտադրանքի նկատմամբ պահանջարկի նվազման, ինչը դրսևորվեց արտահանման գրեթե բոլոր ոլորտներում: Մասնավորապես՝ մեծապես կրճատվեց ավտոմեքենաների և

[1] Տե՛ս Деловая пресса, номер 46 (249) от 23.11.2004.
[2] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության ամենամյա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի մասին հրապարակումների տվյալների: Հաշվի են առնված տնտեսության իրական հատվածում կատարված ներդրումները: Ֆինանսական հատվածի ներդրումները տվյալ դեպքում ներառված չեն:
[3] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ տնտեսական վիճակը 2007 թվականի հունվար-փետրվարին», էջ 82:
[4] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ տնտեսական վիճակը 2008 թվականի հունվար-փետրվարին», էջ 76 և «Հայաստանի Հանրապետության սոցիալ տնտեսական վիճակը 2009 թվականի հունվար-փետրվարին»:

արդյունաբերական արտադրանքի նկատմամբ պահանջարկը, որոնք, ինչպես հայտնի է, գերմանական տնտեսության հենքային ճյուղերն են[1]:

Մասամբ դրանով է բացատրվում 2008 թ. ՀՀ տնտեսությունում գերմանական ներդրումների զգալի կրճատումը: Համաձայն գծապատկեր 2-ի տվյալների՝ 2008 թ. Հայաստանում գերմանական ներդրումները նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել են ավելի քան 57%-ով: Պատճառը համաշխարհային շուկայում հանքահումքային արտադրանքի պահանջարկի նվազումն էր, իսկ գերմանական ներդրումների հենքային ճյուղը ՀՀ տնտեսության իրական հատվածում հանքահումքային արդյունաբերությունն է:

Հայ-գերմանական տնտեսական կապերի ամրապնդման համատեքստում էապես կարևորվում է նաև համագործակցությունը ֆինանսական, մասնավորապես՝ բանկային հատվածում: Համաձայն ՀՀ կենտրոնական բանկից ստացվող տվյալների հիման վրա ԱՎԾ-ի ներկայացրած հաշվետվության՝ 2008 թ. ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների բաժնետիրական կապիտալում ոչ ռեզիդենտների կողմից իրականացվել է 703786.2 հզ դոլարի ներդրում, որից գերմանական ներդրումները կազմել են 45205.2 հզ դոլար, կամ ընդամենը ներդրումների 6.42%-ը[2], որը մինչ այդ ՀՀ բանկային կապիտալում Գերմանիայի կողմից իրականացված ամենախոշոր ներդրում էր:

Ֆինանսական համագործակցության առումով էապես կարևորվում է 2006 թ-ից իրականացվող «Վերականգնվող էներգիայի աջակցություն» և «Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում» ծրագրերը, որոնք իրականացվում են «Գերմանա-հայկական ծրագրի կառավարման գրասենյակի[3]» (ԳՀՀ-ԾԿԳ) կողմից:

2008 թ. ընթացքում ստորագրվել և վավերացվել է ԳԴՀ կառավարության և ՀՀ կառավարության միջև «2007-2008 թվականների ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը, որով նախատեսված էր Հայաստանին տրամադրել շուրջ 74 մլն եվրո ֆինանսական օժանդակություն (70 մլն եվրո՝ որպես վարկ, 4 մլն եվրո՝ որպես դրամաշնորհ):

2008 թ. Հայաստանի արտահանումը Գերմանիա կազմել է 183.7 մլն դոլար, իսկ ներմուծումը Գերմանիայից՝ 255.6 մլն դոլար (տե՛ս աղյուսակ 2.1), ինչը համապատասխանաբար կազմել է 102.8 մլն և 134.3 մլն եվրո, ընդհանուր առևտրաշրջանառությունը՝ 237.1 մլն եվրո, մինչդեռ առևտրաշրջանառության ծավալները նույն թվականի համար Վրաստանի և Ադրբեջանի դեպքում Գերմանիայի արտաքին գերատեսչության տվյալներով կազմել են համապատասխանաբար 358 մլն և 2.400 մլն եվրո[4]:

Այսպիսով, հայ-գերմանական տնտեսական համագործակցությունը ՀՀ անկախացման սկզբնական շրջանում աչքի չի ընկել ինտենսիվության բարձր մակարդակով, և ընդհուպ մինչև 2000-ական թթ. սկիզբը դրսևորվել է հիմնականում Գերմանիայի կողմից Հայաստանին տրամադրվող ֆինանսական և տեխնիկական օժանդակության տեսքով, ինչը, չնայած որ մեծ օժանդակություն էր ՀՀ տնտեսությանը անցումային շրջանի վերափոխումների իրականացման գործընթացում, սակայն բավարար չէր արդյունավետ առևտրաշրջանառության և գործընկերային հարաբերությունների ձևավորման համար:

Երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը մեծ ազդակ հաղորդեցին հատկապես «Կովկասյան նախաձեռնության» շրջանակներում իրականացված փոքր և միջին ձեռնարկատիրության և բանկային հատվածի աջակցության ծրագրերը, ինչպես նաև միջպետական այցերի հաճախականության ակտիվացումը, որի սկիզբը դրվեց 2003 թ. ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի՝ Գերմանիա կատարած պաշտոնական այցով, որը ՀՀ նախագահի առաջին պաշտոնական այցն էր ԳԴՀ:

ՀՀ և ԳԴՀ տնտեսական համագործակցության շրջանակներում բեկումնային էր հատկապես 2004 թ.-ն, որի ընթացքում տեղի ունեցավ հայ-գերմանական խոշոր գործարար համաժողով, ինչին հաջորդեց գերմանական կապիտալի զգալի ներհոսք դեպի ՀՀ տնտեսություն, մասնավորապես՝ ՀՀ հանքարդյունաբերության հսկայի՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում գերմանական «Քրոնիմետ» ընկերության իրականացրած խոշոր ներդրման հաշվին: Միաժամանակ նկատվեց նաև առևտրաշրջանառության աշխուժացում, ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ոլորտներում:

---

[1] **Агафонова М., Архипова Е.,** Мировой экономический кризис 2008-2009 гг. и его влияние на экономику Германии, Вестник ВГЛА, 2009.

[2] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ տնտեսական վիճակը 2009 թվականի հունվար-փետրվարին», էջ 77:

[3] «Գերմանա-հայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ՝ հիմնարկը ստեղծվել է ՀՀ ԿԲ նախագահի սեպտեմբերի 14-ի թիվ 518 հրամանով: Հիմնարկի միակ հիմնադիրն է ՀՀ կենտրոնական բանկը: ԳՀՀ ԾԿԳ-ի գործունեության հիմնական նպատակը ՀՀ և ԳԴՀ կառավարությունների միջպետական համաձայնագրերի շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկի Գերմանիայի Դաշնության Վերականգնման վարկերի բանկի (KfW) միջև կնքված պայմանագրերի և դրանց մասը կազմող առանձին համաձայնագրերի համաձայն՝ Գերմանա-հայկական հիմնադրամի վարկային ծրագրերի իրականացումն ու կառավարումն է:

[4] Տե՛ս Auswartiges Amt, Landerinformationen, Armenien, Gerorgien, Aserbaitschan, Wirtschaftsdatenblatt, հասանելի է՝ http:/www.auswaertiges-amt.de/diplo/de/Laenderinformationen:

2008 թ. դրությամբ Հայաստանում գործում էին Գերմանական կապիտալով 100-ից ավելի ընկերություններ, այդ թվում՝ համաշխարհային ճանաչում ունեցող մի շարք ընկերությունների ներկայացուցչություններ, զգալիորեն ավելացել էին ապրանքաշրջանառության ծավալները:

Այդուամենայնիվ տարածաշրջանում ԳԴՀ-ի հետ տնտեսական համագործակցության բնագավառում, մի շարք օբյեկտիվ գործոններով պայմանավորված, ՀՀ-ն դեռևս շարունակում էր զիջել հարևան Վրաստանին և Ադրբեջանին:

Մարտին Թովմասյան

ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1991-2008 ԹԹ.

Բանալի բառեր՝ Հայաստանի Հանրապետություն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, հայ-գերմանական տնտեսական հարաբերություններ, ներդրումներ

Սույն հոդվածը նվիրված է 1991-2008 թթ. ընկած ժամանակահատվածում հայ-գերմանական տնտեսական համագործակցության ուսումնասիրությանը: 1990-ական թթ. հայ-գերմանական տնտեսական կապերը, չնայած մի շարք միջպետական համաձայնագրերի առկայությանը, սահմանափակվում էին գլխավորապես Գերմանիայի կողմից ՀՀ-ին տրամադրվող տեխնիկական և ֆինանսական օժանդակությամբ, իսկ երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալները դեռևս դրսևորում էին զածր զուգանիշներ: Երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների ակտիվացման միտումներ սկսեցին դրսևորվել 2000 թ. և անցան զարգացման նոր փուլ:

Мартин Товмасян

АРМЯНО-ГЕРМАНСКИЕ ЭКОНОМИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ В 1991–2008 ГОДАХ

Ключевые слова: Республика Армения, ФРГ, армяно-немецкие отношения, экономика, эконоимические отношения, инвестиции

В 1990-ые годы экономические связи между двумя странами ограничивались в основном финансово-технической помощью со стороны Германии, несмотря на то, что в этот период между ними уже существовало несколько межправительственных соглашений. Активизация тенденций экономических отношений между двумя странами начала проявляться с 2000-ого года. В статье освещается динамика развития экономического сотрудничества двух стран в этот период.

Martin Tovmasyan

ARMENIAN-GERMAN ECONOMIC COOPERATION IN 1991-2008

Keywords: Republic of Armenia, Federal Republic of Germany, Armenian-German economic relations, investments

The present paper is devoted to study of formation and development of Armenian-German economic relations from 1991 to 2008. Nevertheless, the fact that Economic relations between the Republic of Armenia and the Federal Republic of Germany were established in the earlier years of Armenia's independent statehood and have mainly were in the form of financial and technical support to Armenia. The activation of the latter trends of economic relations between the two countries began to develop starting from 2000.